ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N482 -Ա **02 փետրվարի 2009թ.**

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԿԱՑԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի 2009թ. հունվարի 26-ին կայացած նիստի արձանագրությունները (հ.հ.1-4) և հողամասերի աճուրդային վաճառքի արդյունքների մասին ամփոփ տեղեկանքը.

1. Հաստատել 2009թ. հունվարի 26-ին կայացած.

1.1 Հողամասերի աճուրդային վաճառքի արդյունքները և հաղթող /գնորդ,/ ճանաչել սույն որոշման հ.1-3 հավելվածներում նշված անձանց:

1.2 Հայտեր չլինելու պատճառով վաճառքը չկայացած հողամասերի համար կրկին անգամ հայտարարել աճուրդ (հավելված4):

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղար Ն.Տեր-Ստեփանյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ աճուրդում հաղթող /գնորդ/ ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների մուծումը /փոխանցումը/ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքում գտնվող Երևանի քաղաքապետարանի հ.900013211017 հաշվարկային հաշվին:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ հաշվապահության միջոցով ապահովել աճուրդի մասնակից չհաղթած հայտատուների կողմից Երևանի քաղաքապետարանի հ.900013211017 հաշվարկային հաշվին մուծված նախավճարների վերադարձը (հավելված հ.5):

4. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ աճուրդով գնված հողամասերի վճարման ենթակա գումարների /սահմանված ժամկետում ու կարգով/ վճարումները կատարելուց հետո, աճուրդում հաղթողներին ապահովել հողամասի հատակագծերով, նշահարման ակտերով, կնքել հողամասերի օտարման պայմանագրեր:

5. Ընդունել ի գիտություն, որ.

5.1 Ամուրդում հաղթած անձանց հողամասերում նպատակային նշանակության օբյեկտների նախագծման համար անհրաժեշտ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է և նախագիծը համաձայնեցվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից՝ հիմք ընդունելով եկամտային տվյալներով սահմանված չափանիշները և Երևանի քաղաքապետի 23.07.2001թ. հ.789 որոշմամբ սահմանված՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից տրվելիք բնապահպանական պահանջներն ու սահմանափակումները:

5.2 Ամուրդում հաղթած անձինք իրենց միջոցներն են ներդնելու նախագծով հաստատված կառույցների և ինժեներական հաղորդագծերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարական-մոնտաժային աշխատանքների կատարումն ապահովելու համար:

5.3 Հողամասերի նկատմամբ քաղաքացիների ու իրավաբանական անձանց իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ե.ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված 1
Երևանի քաղաքապետի 02.02.2009թ.
_____ h. 482 -Ա ՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009Թ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ /ԳՆՈՐԴԻ/

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, /իրավաբանական անձի անվանումը/, հասցեն

Սարգիս Մանասարյան, անձ. AF 0304691, 11.05.2001թ. 013 կողմից, հասցեն ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. 46/27:

2. Գնորդը մուծել է՝

ա/ 238001333000 h/h՝ մասնակցության վճար - *30.0 հազ.դրամ, «ԱԾԻԲ», անդ. h.9010900196138, տրված 09.01.2009թ.*

բ/900013211017 h/h՝նախավճար – *205.8 հազ.դրամ, «ԱԾԻԲ», անդ. h.9010900196142, տրված 09.01.2009թ.*

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝ - Դավթաշեն, Դավթաշեն 4-րդ թաղ. h.45/3, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար:

4. Հողամասն աճուրդով վաճառելու մասին որոշման համարը – *Երևանի քաղաքապետի ---25.12.2008թ., N 6310-Ա:*

5. Վաճառվող հողամասի ծածկագիրը, համարը, մակերեսը, մեկնարկային գինը – Ա 07/143

196.0քմ., 4116.0 հազ. դրամ:

6. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն /վաճառքի/ գինը –

4733.4 հազ. դրամ:

7. Ենթակա է վճարման /հաշվի առնելով մուծված նախավճարը/ - 4527.6 հազ. դրամ:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան

Հավելված 2
Երևանի քաղաքապետի 02.02.2009թ.
_____ հ. 482 -Ա ՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2009Թ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ /ԳՆՈՐԴԻ/

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, /իրավաբանական անձի անվանումը/, հասցեն

Աշոտ Սնջոյան, անձ. AA 0594544, 06.09.1996թ. 007 կողմից, հասցեն ք. Երևան, Ավան, Իսահակյան 3/3շենք, բն.30:

2. Գնորդը մուծել է՝

ա/ 238001333000 հ/հ՝ մասնակցության վճար - *30.0 հազ.դրամ, «Կոնվերս բանկ»Ավան մ/ճ, անդ. հ.000150, տրված 20.01.2009թ.*

բ/900013211017 հ/հ՝նախավճար – *294.0 հազ.դրամ, «Կոնվերս բանկ»Ավան մ/ճ, անդ. հ.000149, տրված 20.01.2009թ.*

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝ - Ավան, Բաբաջանյան փողոց հ.20/3, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար:

4. Հողամասն աճուրդով վաճառելու մասին որոշման համարը – *Երևանի քաղաքապետի ---25.12.2008թ., N 6310-Ա:*

5. Վաճառվող հողամասի ծածկագիրը, համարը, մակերեսը, մեկնարկային գինը – Ա 08/74

280.0քմ., 5880.0 հազ. դրամ:

6. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն /վաճառքի/ գինը –

6468.0 հազ. դրամ:

7. Ենթակա է վճարման /հաշվի առնելով մուծված նախավճարը/ - 6174.0 հազ. դրամ:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան

Հավելված 3

Երևանի քաղաքապետի 02.02.2009թ.

_____ հ. 482 -Ա ՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009Թ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ /ԳՆՈՐԴԻ/

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, /իրավաբանական անձի անվանումը/, հասցեն

Շողերինա Մկրտչյան, անձ. ԱՀ 0624600, 14.07.2008թ. 004 կողմից, հասցեն՝ ք. Երևան, Կոմիտաս 7/1-19:

2. Գնորդը մուծել է՝

ա/ 238001333000 հ/հ՝ մասնակցության վճար - *30.0 հազ.դրամ, «ԱՇԻԲ», անդ. հ.9012200639441, տրված 22.01.2009թ.*

բ/900013211017 հ/հ՝նախավճար – *2241.0 հազ.դրամ, «ԱՇԻԲ», անդ. հ.9012200639439, տրված 22.01.2009թ.*

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝ - Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիա փողոց հ.141/11, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար:

4. Հողամասն աճուրդով վաճառելու մասին որոշման համարը – *Երևանի քաղաքապետի ---25.12.2008թ., N 6310-Ա:*

5. Վաճառվող հողամասի ծածկագիրը, համարը, մակերեսը, մեկնարկային գինը – Ա 08/86 *1659.99քմ., 44 820.0 հազ. դրամ:*

6. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն /վաճառքի/ գինը –

47 061.0 հազ. դրամ:

7. Ենթակա է վճարման /հաշվի առնելով մուծված նախավճարը/ - 44 820.0 հազ. դրամ:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան

Հավելված 4
Երևանի քաղաքապետի 02.02.2009թ.
_____ ի. 482 -Ա ՈՐՈՇՄԱՆ

2009Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ, ՉՀԱՂԹԱԾ ԱՆՋԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ Հ.1 ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 900013211017 Հ/Հ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Ջարուհի Ղարիբյանց – 2 241.0 հազ. դրամ /անձն. AA 0457387, տրված 12.07.1996թ., 011 կողմից, անդորրագիր հ. 9012200639445, «ԱԾԻԲ», 22.01.2009թ. /:
2. Արշակ Սահակյան – 294.0 հազ. դրամ /անձն. AA 0382983, տրված 05.06.1996թ., 006 կողմից, անդորրագիր հ. 000008, «Զարգացման Հայկական բանկ», 20.01.2009թ. /:
3. Գագիկ Կարապետյան – 205.8 հազ. դրամ /անձն. AG 0227775, տրված 12.02.2004թ., 004 կողմից, անդորրագիր հ. 9012100638702, «ԱԾԻԲ», 21.01.2009թ. /:
4. Արա Իսանյանս – 205.8 հազ. դրամ /անձն. AA 0215736, տրված 15.03.1999թ., 002 կողմից, անդորրագիր հ. 9012200639669, «ԱԾԻԲ», 22.01.2009թ. /:
5. Աշոտ Հովհաննիսյան – 205.8 հազ. դրամ /անձն. AB 0613990, տրված 07.01.1998թ., 006 կողմից, անդորրագիր հ. 9012000637662, «ԱԾԻԲ», 20.01.2009թ. /:

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար Գ.Մելքումյան